

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ

*(Վաւերացուած Գաւառական Ժողովի
Ա. Նստաշրջանի 5 Ապրիլ 2003-ի նիստին)*

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ

ԳԼՈՒԽ Ա.- ՆՊԱՏԱԿ

Յօդ. 1.- *Լիբանանի Հայոց Թեմի Ազգային վարժարաններուն նպատակն է լիբանանահայ նոր սերունդին ջամբել մինչեւ նախահամալսարանական կարգի (պաքալորիայի) կրթութիւն, պատրաստելու համար ո՛չ միայն պետական վկայականներու արժանացած ուսանողներ, այլեւ՝ բարոյապէս ամուր եւ ազգային ու մարդկային ամբողջական դաստիարակութիւն ստացած գիտակից, յանձնառու եւ նուիրեալ հայեր ու քաղաքացիներ:*

ԳԼՈՒԽ Բ.- ՄԻՋՈՑՆԵՐ

Յօդ. 2.- *Լիբանանի Հայոց Թեմի Ազգային Իշխանութիւնը, իրագործելու համար Ազգային վարժարաններու նպատակը, կը հաստատէ կրթական հիմնարկներ, համաձայն պետական կրթական ծրագիրին (մանկապարտէզ, նախակրթարան, միջնակարգ, երկրորդական, արհեստից եւ արուեստից վարժարաններ):*

Յօդ. 3.- *Վարժարանի մը աստիճանակարգը Ֆմանկապարտէզ, նախակրթարան, միջնակարգ, երկրորդական, արհեստից եւ արուեստից՝ կ'ջառաջարկէ Ուսումնական Խորհուրդը, կ'որոշէ Քաղաքական Ժողովը եւ կը վաւերացնէ Գաւառական Ժողովը:*

Յօդ. 4.- *Աստիճանակարգի փոփոխութեան համար, խնամակալութիւն (կամ հոգաբարձութիւն) եւ տնօրէնութիւն կը դիմեն Ուսումնական Խորհուրդին:*

Յօդ. 5.- *Ուսումնական Խորհուրդի հրաւերով, Ազգային վարժարաններու տնօրէնները պարբերաբար կը գումարեն խորհրդակցական ժողովներ՝ քննարկելու եւ ճշդելու համար որդեգրելի դասագրքերը, տօնացոյցը, արտադպրոցական աշխատանքները եւ ընդհանրական բնոյթ ունեցող կրթական հարցեր:*

ԳԼՈՒԽ Գ.- ՄԱՐՄԻՆՆԵՐ

Յօդ. 6.- *Լիբանանի Հայոց Առաջնորդն է Ազգային վարժարաններու իրաւական արտօնատէրը:*

Յօդ. 7.- Ազգային վարժարաններու գերագոյն մարմինը Ազգ. Ուսումնական Խորհուրդն է, որուն նիստերուն կը նախագահէ Թեմի Առաջնորդը:

Յօդ. 8.- Վարժարաններու պատասխանատու վերահսկիչ մարմիններն են խնամակալութիւնները, հոգաբարձութիւնները կամ, ի պահանջեալ հարկին, թաղականութիւնները: Վերահսկիչ մարմինները պարտին գործադրել ներկայ կանոնագիրին տրամադրութիւնները եւ Ուսումնական Խորհուրդին կրթական ծրագիրներն ու որոշումները:

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

Յօդ. 9.- Ազգային երկրորդական կամ միջնակարգ վարժարանի վերահսկիչ մարմինն է վարժարանի խնամակալութիւնը, որ կը նշանակուի Ուսումնական Խորհուրդին կողմէ եւ կը բաղկանայ 5, 7, 9 կամ 11 անդամներէ:

Յօդ. 10.- Ազգային նախակրթարաններու վերահսկիչ մարմինն է վարժարանի հոգաբարձութիւնը, որ կը բաղկանայ 5, 7, 9 կամ 11 անդամներէ: Հոգաբարձութիւնը կ'առաջարկէ պատկան թաղականութիւնը եւ կը վաւերացուի Ուսումնական Խորհուրդին կողմէ:

Յօդ. 10.-

ա.- Հոգաբարձութեան հրաժարումը անմիջապէս կը տեղեկացուի Ուսումնական Խորհուրդին: Մինչեւ նոր հոգաբարձութեան նշանակումը եւ առաւելագոյնը երեք ամիս, պատկան թաղականութիւնը կը ստանձնէ հոգաբարձութեան աշխատանքը, նոյն իրաւասութիւններով եւ պարտաւորութիւններով:

բ.- Մինչեւ երեք ամիս եթէ թաղականութիւնը չկարենայ կազմել հոգաբարձութիւն, Ուսումնական Խորհուրդը կը նշանակէ զայն:

գ.- Խնամակալութեան մը հրաժարումի պարագային, Ուսումնական Խորհուրդը անմիջապէս կը նշանակէ նոր խնամակալութիւն:

դ.- Իր մեծամասնութիւնը կորսնցուցած խնամակալութիւն (կամ հոգաբարձութիւն) մը լուծուած կը համարուի եւ կը փոխարինուի նշանակուած նոր կազմով մը:

- ե. - Երբ խնամակալութեան (կամ հոգաբարձութեան) մը մէջ բացեր գոյանան, մնացեալները իրենց կազմը կ'յամբողջացնեն եւ կը դիմեն իրենց համարատու մարմնին՝ առ ի վաւերացում:
- զ. - Խնամակալութեան (կամ հոգաբարձութեան) մը գործունէութիւնը երբ անբաւարար նկատուի, կրնայ լուծուիլ գերադաս մարմնին կողմէ:
- Յօդ. 11.- Խնամակալութեան (կամ հոգաբարձութեան) գործունէութեան շրջանը երկու տարի է եւ ան-դամները վերանշանակելի:
- Յօդ. 12.- Խնամակալութիւն թէ Հոգաբարձութիւն կ'ունենան իրենց դիւանները՝ աստենապետ, աստենադպիր, գանձապահ եւ հաշուապահ:
- Յօդ. 13.- Խնամակալութիւնը (կամ հոգաբարձութիւնը) վարժարանի կրթական, ուսումնական, տնտեսական եւ վարչական գործունէութեան ընդհանուր պատասխանատուն է: Ան համարատու է Ուսումնական Խորհուրդին:
- Յօդ. 13 բ.- Խնամակալութիւն եւ հոգաբարձութիւն ունին հետեւեւալ իրաւասութիւններն ու պարտաւորութիւնները.-
- ա. - Կ'ունենան կանոնաւոր հերթականութեամբ ժողովական կեանք, կը պահեն արխիւ եւ ժողովի աստենագրութիւն, գոր նիստէն առաւելագոյն 15 օր ետք կը յղեն Ուսումնական Խորհուրդին, տնօրէնին միջոցաւ:
- բ. - Կը քննարկեն եւ կը հաստատեն տնօրէնին կողմէ պատրաստուած վարժարանի միամեայ նիւթական տեղեկագիրը եւ տարեկան նախահաշիւ պիւտճէն եւ կը յղեն Ուսումնական Խորհուրդին՝ մինչեւ Ապրիլ 30:
- գ. - Տնօրէնին հետ համախորհուրդ ու Ուսումնական Խորհուրդի հաւանութեամբ, պաշտօնէ կ'յարձակեն կամ իրենց պաշտօնին վրայ կը վերահաստատեն ուսուցիչներ, օրինական ժամկէտէն առաջ (4 Յուլիս): Կ'յամբողջացնեն ուսուցչական կազմը մինչեւ Օգոստոս 31:
- դ. - Կը հետեւին վարժարանի կրթաթոշակի գանձումներուն:

ե. - Կը կազմակերպեն հասութարեր ձեռնարկներ, կը մշակեն տնտեսական ծրագիրներ եւ կ'ապահովեն բարերարներ կամ կրթանպաստ՝ վարժարանի պիտձէն հաւասարա-կըշտելու համար:

Յօդ. 14.- Խնամակալութիւնը (կամ հոգաբարձութիւնը) իր պարտականութիւնները կը կատարէ վարժարանի տնօրէնին հետ համախորհուրդ:

Յօդ. 15.- Վարժարանի տնօրէնը ի պաշտօնէ խորհրդակցական ձայնով կը մասնակցի խնամակալութեան (կամ հոգաբարձութեան) ժողովներուն:

ԳԼՈՒԽ Դ.- ՏՆՕՐԷՆ

Յօդ. 16.- Վարժարանի տնօրէնը կազմակերպիչն ու պատասխանատուն է վարժարանի ուսումնական, կրթական եւ կարգապահական գործին, աշակերտներու բարոյական ու ազգային դաստիարակութեան, ինչպէս նաեւ՝ վարչական եւ նիւթական գործունէութեան: Ան գլուխն է վարժարանի ուսուցչական կազմին եւ պաշտօնէութեան: Ան համարատու է խնամակալութեան (կամ հոգաբարձութեան) եւ Ուսումնական Խորհուրդին:

Յօդ. 17.- Ուսումնական Խորհուրդը տնօրէնը կը նշանակէ վարժարանին խնամակալութեան (կամ հոգաբարձութեան) կողմէ առաջարկուած թեկնածուներէն կամ իրեն ներկայացող յարմարագոյն թեկնածուներէն:

Յօդ. 18.- Տնօրէնութեան թեկնածու կրնան ըլլալ Հայ Առաքելական Եկեղեցւոյ պատկանող, բարոյական արժէքներու տէր անհատներ, որոնք պարտին ունենալ հետեւեալ վկայականներէն նուազագոյնը մէկը.-

ա. - Համալսարանական «Մագիստրոս Դպրոցական Վարչագիտութեան» տիտղոս (MA in School Administration)

բ. - Համալսարանական «Մագիստրոս Ուսումնական Գիտութեան» տիտղոս (MA in Education) եւ երկրորդական վարժարանի ուսուցչական փորձառութիւն՝ երկրորդական վարժարանի տնօրէնութեան պարագային:

գ. - «Մազհեստրոս Հայագիտութեան» տիտղոս եւ զէթ 5 տարուան ուսուցչական փորձառութիւն:

դ. - Համալսարանական اجازة تعليمية կամ اجازة جامعية տիտղոսը եւ հինգ տարուան երկրորդական վարժարանի ուսուցչական փորձառութիւն՝ երկրորդական վարժարանի տնօրէնութեան պարագային:

Յօդ. 19.- Տնօրէնի ամսական վարձատրութիւնը կը ճշդէ Ուսումնական Խորհուրդը, հիմնուելով կրթական նախարարութեան ճշդած արժէչափերուն վրայ:

Յօդ. 20.- Նոր նշանակուած տնօրէն մը պաշտօնի կը կոչուի երկու տարուան փորձառական շրջանի մը համար, որմէ ետք միայն կը հաստատուի իր պաշտօնին վրայ, եռամեայ համաձայնագիրով՝ Ուսումնական Խորհուրդին հետ:

Յօդ. 21.- Տնօրէն մը կրնայ պաշտօնէ արձակուիլ ինսամակալութեան (կամ հոգաբարձութեան) առաջարկով եւ Ուսումնական Խորհուրդի որոշումով: Ուսումնական Խորհուրդը իր պատասխանատուութեամբ կրնայ պաշտօնէ արձակել տնօրէն մը: Պաշտօնէ արձակման պարագային, կը յարգուին ուսուցիչներու արձակման պետական յատուկ օրէնքները, ըստ արձակման տուն տուող պատճառներուն:

Յօդ. 22.- Տնօրէն մը պարտի իր ասպարէզին ամբողջական ժամանակն ու ուժականութիւնը յատկացնել վարժարանի ղեկավարման: Ուսումնական Խորհուրդի հաւանութեամբ՝ ան կրնայ նաեւ պաշտօնավարել ուսումնական կամ մտաւոր ասպարէզի այլ հաստատութեան մը մէջ, դպրոցի ժամերէն ետք, իբրեւ այցելու, այսինքն՝ սահմանափակ ժամանակով (160 ժամ տարեկան):

Յօդ. 23.- Բացառիկ պարագաներու եւ միայն Ուսումնական Խորհուրդի արտօնութեամբ, տնօրէն մը կրնայ բացակայիլ երկրէն: Այս պարագային, տնօրէնին առաջարկով ինսամակալութեան (կամ հոգաբարձութեան) կողմէ կը նշանակուի զինք փոխարինող ավագ ուսուցիչ մը, Ուսումնական Խորհուրդի հաւանութեամբ:

Յօդ. 24.- *Տնօրէնին առաջնահերթ պարտականութիւնն է կիրարկել Ուսումնական Խորհուրդի կրթական ծրագիրը:*

Յօդ. 25.- *Ան ենթակայ է կրթական նախարարութեան պետական օրէնքներուն:*

ա.- Ընդհանուր պարտականութիւններ

ա.1.- *Կը հսկէ այս կանոնագիրի անթերի գործադրութեան:*

ա.2.- *Ի պաշտօնէ կը մասնակցի վարժարանի խնամակալութեան (կամ հոգաբարձութեան) նիստերուն, ուր մանրամասնօրէն կը զրկուցուի վարժարանի ուսումնական, յարաբերական, վարչական, կարգապահական եւ նիւթական վիճակի մասին, ներկայացնելով քննարկման կամ որոշման կարօտող հարցերը:*

ա.3.- *Երկրորդական եւ միջնակարգ վարժարանի տնօրէնը պարտի դասաւանդել շաբաթական նուազագոյնը 6 պահ:*

ա.4.- *Նախակրթարանի տնօրէնը պարտի դասաւանդել շաբաթական նուազագոյնը 9 պահ:*

ա.5.- *Ամբան արձակուրդին, տնօրէնը եւ պաշտօնէութիւնը նեկայ կ'ըլլան դպրոցէն ներս, պետական օրէնքին ճշդած եղանակով: Տնօրէնը եւ պաշտօնէութիւնը արձակուրդ կ'յառնեն Օգոստոս ամսուն: (Ի պահնջեալ հարկին, գերադաս մարմնի հրաւերով, տնօրէն, ուսուցիչ կամ պաշտօնէայ պարտի գործի ներկայանալ որոշ նպատակի եւ ժամանակամիջոցի համար):*

ա.6.- *Որպէս կրթական մշակ՝ կ'յուսումնասիրէ մանկավարժական, վարչական եւ կրթական մագի զարգացումները, իրագել կը դառնայ նորութիւններուն, մասնաւորաբար կրթական նախարարութեան հրատարակած գիրքերուն եւ օրէնքներուն: Կը մասնակցի ուսումնական եւ մանկավարժական համագումարներու: Կենդանի կապ կը պահէ Լիբանանի մէջ գործող համալսարաններու հետ, իր շրջանաւարտ ուսանողները հոն առաջնորդելու նպատակով:*

ա.7.- *Անձնապէս կամ հաւաքաբար, կը պատրաստէ մանկավարժական-կրթական, ազգային կամ ընկերային հարցերու մասին ուսումնասիրութիւններ:*

ա.8.- *Միջ-վարժարանային կամ ընդհանրական այլ ձեռնարկներու եւ միջոցառումներու առիթով, կը ստանձնէ Ուսումնական Խորհուրդի ճշդած պարտականութիւնները: Կը մասնակցի Ուսումնական Խորհուրդի ճշդած յանձնախումբերուն:*

բ. - Ուսումնական Պարտականութիւններ

բ.1.- *Ուսումնական Խորհուրդի կրթական ծրագիրին իրականացման համար, տնօրէնը կը ճշդէ վարժարանի դասանիւթերը, դասապահերը եւ անհրաժեշտ դասաւանդ ուսուցիչներուն թիւը:*

բ.2.- *Կցառաջարկէ ինսամակալութեան (կամ հոգաբարձութեան), որ Ուսումնական Խորհուրդի հաւանութեամբ պաշտօնի հրաւիրէ անհրաժեշտ ուսուցիչները կամ գործէ արձակէ զա-նոնք, յարգելով պետական օրէնքները:*

բ.3.- *Կը նշանակէ ուսումնական բաժանմունքներու պատասխանատու աւագ ուսուցիչներ, որոնք կը համակարգեն այդ բաժանմունքի դասաւանդութիւնը եւ կ'օժանդակեն ուսուցիչներուն՝ բարելաւելու իրենց դասաւանդութիւնը եւ գործադրելու ուսումնական ծրագիրը:*

բ.4.- *Կը նշանակէ բոլոր դասարաններուն համար դաստիարակ ուսուցիչներ:*

բ.5.- *Տարեշրջանի վերամուտէն առաջ, իւրաքանչիւր ուսուցիչէն կը պահանջէ իր դասանիւթերուն տարեկան մանրամասն ծրագիրը:*

բ.6.- *Կը պատրաստէ դասերու բաշխումը եւ դասացուցակը:*

- բ.7.- Հիմնուելով դասանիւթերու տարեկան ծրագիրին վրայ եւ հետեւելով Ուսումնական Խորհուրդի գրասենեակին այս նպատակով պատրաստած բնօրինակին, առարկայական տուեալներով կը պատրաստէ կրթական արժեւորումի տախտակներ եւ տոմար, հսկելու համար ծրագիրի գործադրութեան եւ ուսուցման մակարդակի պահպանումին:
- բ.8.- Հետեւողական կերպով կ'յուսումնասիրէ քննութեանց հարցարանները՝ քննութենէն առաջ, իսկ արդիւնքները՝ քննութենէն ետք, պահելով յատուկ տախտակներ եւ տոմար, առարկայականօրէն արժեւորելով թէ՛ ուսուցիչներու եւ թէ՛ աշակերտներու մակարդակը: Յուցմունքներ կը կատարէ ուսուցիչներուն, սրբագրելու համար յայտնուած թերութիւնները:
- բ.9.- Հետեւողական կերպով կ'յուսումնասիրէ տնային պարտականութեանց ընթացքը եւ ցուցմունքներ կը կատարէ ուսուցիչներուն:
- բ.10.- Պարբերաբար եւ ծրագրուած յայտագրով կ'յայցելէ դասարանները եւ ներկայ կը գտնուի դասաւանդութեանց՝ պահելով այցելութեանց յատուկ տոմար:
- բ.11.- Կը հսկէ մանկավարժական սկզբունքներու կիրակման եւ դաստիարակչական իրերու բժախնդիր գործածութեան: Կ'ապահովէ մանկավարժական եւ ուսումնական աշխատանքի համար անհրաժեշտ իրերը:
- բ.12.- Ամսական հերթականութեամբ կը հրաւիրէ ուսուցչական ժողովներ եւ ատենագրութենէն օրինակներ կը յղէ խնամակալութեան (կամ հոգաբարձութեան) եւ Ուսումնական Խորհուրդին:

գ. - Վարչական Պարտականութիւններ

- գ.1.- Վարժարանի ուսումնական ծրագիրի եւ Ազգային վարժարաններու նպատակի (Յօդ. 1) իրագործման համար կը հաստատէ վարչական դրութիւն եւ կը հսկէ անոր անթերի կիրարկման:

գ.2.- Քարտուղարության միջոցաւ, բժախնդրութեամբ եւ կանոնաւոր կերպով, կը հսկէ եւ կը պահէ հետեւեալները, զանոնք միաժամանակ ներմուծելով համակարգիչի մէջ.-

ա.- Պետական թղթածրարներ (աշակերտներու անուանացանկ, թիւ, ուսուցչական կազմի եւ պաշտօնէութեան անուանացանկեր, եւայլն):

բ.- Աշակերտներու անհատական թղթածրարներ:

գ.- Ուսուցիչներու անհատական թղթածրարներ:

դ.- Դպրոցական գոյքերու ցուցակ:

ե.- Նամակագրութեան եւ թղթակցութեան արխիւ:

զ.- Հաշուական թղթածրարներ եւ տոմարներ:

է.- Ուսուցիչներու եւ պաշտօնէութեան ամսավճարներու ցուցակ:

ը.- Ուսուցիչներու եւ պաշտօնէութեան առօրեայ ներկայութեան տախտակ:

թ.- Աշակերտներու առօրեայ ներկայութեան տոմար:

ժ.- Աշակերտներու նիշերու արձանագրութեան տոմար:

ժա.- Բժշկական քննութեանց եւ ապահովագրութեան տոմար:

ժբ.- Ուսուցչական ժողովի ատենագրութեան տոմար:

ժգ.- Դպրոցական կարեւոր անցուդարձերու օրագրութեան տոմար:

ժդ.- Շրջանաւարտներու վիճակի եւ հասցէներու տոմար:

- ժե.- Մարզական եւ արտադասարանային աշխատանքներու տումարներ:
- ժզ.- Հաստատութիւններու կրթանպաստի վերաբերեալ թղթածրարներ:
- ժէ.- Ընկերային պետական ապահովագրութեան սնտուկի ցուցակներ եւ թղթածրարներ: (الصندوق الوطني للضمان الاجتماعي)
- ժը.- Ուսուցիչներու հատուցման սնտուկի ցուցակներ եւ թղթածրարներ: (صندوق التعويضات لأفراد الهيئة التعليمية في المدارس الخاصة)
- զ.3.- Կը նշանակէ ուսուցիչներու հսկողութեան հերփապահութեան կարգը, վարժարանէն ներս աշակերտներու բարւոք եւ ապահով կեցութեան համար:
- զ.4.- Կ'ըստապահովէ դպրոցի առօրեայ անմիջական կարիքները:
- զ.5.- Կը հսկէ դպրոցի մաքրութեան, առողջապահութեան եւ գոյքերու պահպանման:
- զ.6.- Ուսումնական Խորհուրդի պահանջով կը պատրաստէ յատուկ տեղեկագիր եւ տախտակներ:
- զ.7.- Կը պատրաստէ տարեկան իրականացած հաշուեկշիռ-պիւտճէն, որ խնամակալութեան (կամ հոգաբարձութեան) վաւերացումէն ետք եւ Հոկտեմբեր 30-էն առաջ կը ներկայացնէ Ուսումնական Խորհուրդին:
- զ.8.- Կը պատրաստէ յաջորդ տարեշրջանի նախահաշիւ պիւտճէն, որ խնամակալութեան (կամ հոգաբարձութեան) վաւերացումէն ետք եւ Ապրիլ 30-էն առաջ կը ներկայացնէ Ուսումնական Խորհուրդին:
- զ.9.- Կը պատրաստէ յաջորդ տարեշրջանի դասագիրքերու ապսպրանքը՝ Մայիս 1-էն առաջ:

գ.10.- Կը պատրաստէ յառաջիկայ տարեշրջանի գրենական պիտոյքներու ապսպրանքը՝ Յունիս 31-էն առաջ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՄԿԻՉՆԵՐ

- Յօդ. 25.- 250-է աւելի աշակերտ ունեցող դպրոցները կ'յունենան ընդհանուր հսկիչ մը:
- Յօդ. 26.- Ազգային Վարժարաններու ընդհանուր հսկիչները կը դասաւանդեն շաբաթական առնուազն 16 դասաժամ:

ԳԼՈՒԽ Ե.- ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

- Յօդ. 27.- Ուսուցիչներու պարտաւորութիւնները եւ իրաւունքները կը սահմանուին ըստ Լիբանանի պետական կրթական օրէնքներուն:
- Յօդ. 28.- Լիբանանի Թեմի Ազգ. վարժարաններու ուսուցիչները կը բաժնուին երեք խումբերու.-

ա.- Մնայուն ուսուցիչ

ա1.- Մնայուն կը նկատուին այն ուսուցչները, որոնք կը դասաւանդեն նուազագոյնը՝

- Երկրորդական բաժնի մէջ՝ շաբաթական 20 դասաժամ:
- Միջնակարգի մէջ՝ 24 դասաժամ:
- Նախակրթարանի մէջ՝ 27 դասաժամ:
- Մանկապարտէզի մէջ՝ 27-30 դասաժամ:

Այն ուսուցիչները, որոնք միաժամանակ մէկէ աւելի բաժիններու մէջ (նախակրթարան, միջնակարգ, երկրորդական) կը դասաւանդեն, կը դասուին իբրեւ այն բաժնի ուսուցիչ, ուր առաւելագոյն դասաժամ ստանձնած են: Դասաժամերը կ'որոշուին ըստ պետական 22/82 օրէնքին:

բ. - Այցելու ուսուցիչ

բ.1.- *Այցելու կը նկատուին բոլոր այն ուսուցիչները, որոնց շաբաթական դասաժամերու թիւը պետական թիւ 22/82 օրէնքի ճշդած դասաժամերու թիւէն նուազ է:*

բ.2.- *Այցելու ուսուցիչներու հետ կը կնքուի յատուկ պայմանագրութիւն, ուր ճշդուած կ'ըլլան աշխատանքի ժամերը, վարձատրութիւնը, եւ պաշտօնէ դադրեցման պարագային՝ հատուցման եղանակը (ըստ Ուսումնական Խորհուրդի որոշումին):*

բ.3.- *Երկրորդական դասարաններուն մէջ դասաւանդող ուսուցիչ մը, ըստ համաձայնութեան, կրնայ պաշտօնավարել իբրեւ այցելու ուսուցիչ, նոյնիսկ եթէ լրացնէ մնայուն ուսուցիչէ մը պահանջուած պայմանները: Այդ պարագային, մէկէ աւելի վարժարաններու մէջ իր ստանձնած դասաժամերուն գումարը 27-էն աւելի պէտք չէ ըլլայ: Ան միայն մէկ տեղ կրնայ անձնակազմի մէջ ՔԱՏԸ ըլլալ:*

գ. - Յատուկ պայմանագրութեամբ ուսուցիչներ

գ.1.- *Այսուհետեւ Ուսումնական Խորհուրդի հաւանութեամբ՝ յատուկ պայմանագրութեամբ կը պաշտօնավարեն օտարահպատակ հայ ուսուցիչներ: Անոնք կը վայելեն լիբանանցի հայ ուսուցիչներու իրաւունքները, սակայն օրէնքով չեն կրնար անդամագրուիլ ընկերային ապահովութեան եւ հատուցման սնտուկներուն: Անոնք ենթակայ են պետական օրէն ճշդուած զեղչերուն:*

Վարձատրութիւն

Յօդ. 29.- *Ուսուցիչներու վարձատրութիւնը կը կատարուի պետութեան ճշդած սակացոյցին համաձայն: Վարձատրութեան գումարը կը վաւերացուի Ուսումնական Խորհուրդին կողմէ:*

ա.- *Լիբանանի Ազգային վարժարաններուն մէջ պաշտօնավարող մնայուն ուսուցիչները կը վարձատրուին ըստ վկայականի եւ փորձառութեան:*

բ.- Մնայուն ուսուցիչներու վարձատրութենէն ամսական դրութեամբ կը զեղչուին ընկերային ապահովութեան սնտուկին, ուսուցիչներու հատուցման սնտուկին եւ շահատուրքի օրէնքով ճշդուած գումարները: Որեւէ յաւելման պարագային, ուսուցիչներու հատուցման սնտուկին համար կը զեղչուի այդ յաւելումի գումարը մէկ անգամուան համար (երկու ամսականներու տարբերութիւնը):

Օսնութ.- Ընկերային ապահովութեան սնտուկին համար ուսուցիչներէն կը զեղչուի ամսականին 2 առ հարիւրը (դպրոցի բաժինը՝ 7 առ հարիւր), ուսուցիչներու հատուցման սնտուկին համար՝ 6 առ հարիւրը (դպրոցի բաժինը՝ 8.5 առ հարիւր):

Այս համեմատութիւնները կրնան օրէնքով փոփոխութեան ենթարկուիլ:

Յօդ.30.- Մնայուն այն ուսուցիչները, որոնք կը հրաւիրուին յաւելեալ պահեր դասաւանդելու, յաւելեալ պահերուն համար կը վճարուին հաստատութենէն ներս իրենց ստացած թոշակին համեմատութեամբ: Յաւելեալ դասապահերու վճարումը պէտք չէ անցնի իրենց ամսականին 1/3-ը:

Յօդ.31.- Իբրեւ յաւելալ աշխատանքի վարձատրութիւն տրուող որեւէ գումար պէտք է ունենայ իր հիմնաւորումը եւ արժանացած ըլլայ Ուսումնական Խորհուրդի հաւանութեան:
Յաւելեալ աշխատանքի վարձատրութիւնը կարելի է վճարել ամսական դրութեամբ կամ պարբերաբար: Հետեւաբար, այս գումարները յաւելումի ենթակայ չեն եւ հատուցումի հաշուառման մաս չեն կազմեր:

Յօդ.32.- Այցելու ուսուցիչները իրենց նիւթական վարձատրութիւնը կը ստանան իննամսեայ պայմանագրութեամբ եւ կամ ժամական դրութեամբ, ըստ իրենց հետ կնքուած պայմանագրութեան:

Յօդ.33.- Մնայուն ուսուցիչները իրենց նիւթական վարձատրութիւնը կը ստանան 12 ամսուայ դրութեամբ:

Պաշտոնավարություն

- Յօդ.34.- *Ազգային վարժարաններու ուսուցիչները պաշտոնի կը կոչուին տնօրէնութեան կողմէ, ինսամակալութեան Կկամ հոգաբարձութեան՝ համամտութեամբ եւ Ուսումնական Խորհուրդի հաւանութեամբ ԿՅուլիս 5-էն մինչեւ կրթական տարեմուտ՝: Դիմումը ուղղուած կ'ըլլայ տնօրէնութեան: Պայմանագրութիւնները կը ստորագրեն տնօրէնն ու ուսուցիչը՝ չորս օրինակով, տրամադրելու համար ենթակային, ինսամակալութեան Կկամ հոգաբարձութեան՝, տնօրէնութեան եւ Ուսումնական Խորհուրդին: Պայմանագրութեան կը կցուի պաշտոնի հրաւիր-ւած ուսուցիչին պարտաւորութիւնները եւ իրաւունքները ճշդող գրութիւն մը:*
- Յօդ.35.- *Բոլոր վարժարաններու պարագային, պաշտոնի կոչուող ուսուցիչները այսուհետեւ պարտին ունենալ նուագագոյնը պաքալորիա, առաւել՝ 2 տարուան մասնագիտական պատրաստութիւն:*
- Յօդ.36.- *Նորեկ ուսուցիչներու պարագային, առաջին երկու տարիները կը նկատուին փորձառական շրջան:*
- Յօդ.37.- *Փորձառական երկու տարուան շրջանէն ետք, երբ ենթական կը հաստատուի իր պաշտոնին վրայ եւ կ'արձանագրուի ուսուցիչներու հատուցման սնտուկ, կը դառնայ անձնակազմի անդամ (ՔԱՏԸ):*
- Յօդ.38.- *Պաշտոնավարութեան ընթացքին աշխատանքը լքող ուսուցիչը կ'ենթարկուի պետական օրէն-քի նախատեսած տրամադրութիւններուն:*

Պարտաւորութիւններ

- Յօդ.39.- *Ուսուցիչները համարատու են տնօրէնին:*
- Յօդ.40.- *Ուսուցիչները կը գործադրեն պետական եւ Ուսումնական Խորհուրդի կրթական ծրագիրները եւ կը յարգեն Ազգային վարժարաններու կանոնագրութիւնը:*

Յօդ.41.-

- ա.- *Ամրան, յատկապէս Սեպտեմբեր ամսուն, կը մասնակցին նախապատրաստական աշխատանքներուն եւ ծրագիրներուն մշակման:*
- բ.- *Աւանդելի դասերը կ'ուսումնասիրեն նախապէս, յատուկ տետրակի մէջ մշակելով իւրաքանչիւր առարկայի տարեկան ընդհանուր նախագիծը, զոր կը ներկայացնեն տնօրէնին, առ ի հաւանութիւն:*
- գ.- *Երկու ամիսը անգամ մը տնօրէնին կը ներկայացնեն ծրագրին իրագործուած բաժինը:*
- դ.- *Իրենց ազատ պահերուն, վարժարանէն կրնան բացակայիլ միայն տնօրէնութեան արտօնութեամբ եւ ոչ մնայուն դրութեամբ:*
- ե.- *Ամէն առաւօտ կը ստորագրեն տնօրէնութեան կողմէ պատրաստուած ներկայութեան տոմարին մէջ:*
- զ.- *Կ'օժանդակեն դպրոցին կազմակերպած ձեռնարկներուն:*
- է.- *Կը մասնակցին Ուսումնական Խորհուրդի ծրագրած կամ թելադրած ձեռնարկներուն եւ վերապատրաստման աշխատանքներուն:*
- ը.- *Կը փոխարինեն բացակայ պաշտօնակից մը, իրենց ազատ ժամերուն:*

Յօդ.42.-

Դասարաններու դաստիարակները նախընտրաբար կը նշանակուին հայ ուսուցիչներէ: Անոնց պարտաւորութիւններն են.-

- ա.- *Ստուգել աշակերտներուն ներկայութիւնը, յապաղումը եւ ճշդել բացակայութեան պատճառները:*
- բ.- *Տնօրէնին գիտակցութեամբ, ծնողները իրազեկ պահել իրենց զաւակներու աշխատանքին եւ թերացումներու մասին:*
- գ.- *Տնօրնութեան տեղեկագրել դասարանի կարելոր անցուդարձերը:*

- դ.- Պատրաստել իւրաքանչիւր աշակերտի դաստիարակչական հետեւողական թղթածրարը:
- ե.- Պատրաստել աշակերտներու վիճակացոյցները:
- զ.- Հետամուտ ըլլալ աշակերտներու հայեցի դաստիարակութեան, բարոյական եւ հոգեկան արժանիքներու զարգացման եւ ձիրքերու մշակման:
- է.- Ստեղծել ընկերային մթնոլորտ եւ կազմակերպել ընկերային բնոյթով աշխատանքներ:
- ը.- Հետամուտ ըլլալ աշակերտներու մաքրութեան եւ կարգապահութեան:
- թ.- Հսկել իրենց յանձնուած դասարանի մաքրութեան եւ գոյքերու պահպանման:
- ժ.- Հսկել դասացուցակով նախատեսուած սերտողութեանց:

Կարգապահական

- Յօդ.43.- *Տնօրէն, ուսուցիչ եւ պաշտօնեայ ենթակայ են պետականօրէն սահմանուած կարգապահական կանոններուն:*
- Յօդ.44.- *Ուսուցիչի մը թերացումները իրեն դիտել կը տրուին տնօրէնին կողմէ՝ նախ բերանացի, ապա գրաւոր:*
- Յօդ.45.- *Տնօրէն մը, ուսուցիչ մը կամ պաշտօնեայ մը իր թերացումներուն եւ հակականոնագրային ընթացքին համար կրնայ ստանալ գրաւոր դիտողագիր: Երեք գրաւոր դիտողագիրէ ետք, եթէ շարունակէ թերանալ, ենթակայ կ'ըլլայ պաշտօնական ազդարարագիրի, որ կը դրկուի համարառու անձին, կամ պատասխանատու մարմնին կողմէ:*
- Յօդ.46.- *Ազդարարագիրին պատճէնը կը դրկուի Ուսումնական Խորհուրդին: Այնուհետեւ, տնօրէնն ու պատասխանատու մարմինները (կամ Ուսումնական*

Խորհուրդը՝ տնօրենի պարագային) կը սահմանեն պատժական տնօրինումներ՝ ըստ օրենքի սահմանած տրամադրություններուն:

Յօդ.47.- *Ուսուցիչը առաջարկներ ընելու կամ բողոքելու իրաւունք ունի: Ան նախ նամակով մը կը դիմէ տնօրենին, ապա, գոհացու չստանալու պարագային՝ խնամակալութեան Քկամ հոգա-բարձութեան՝ խողովակով Ուսումնական Խորհուրդին:*

Յօդ.48.- *Ազգային վարժարաններու պաշտօնեաներու իրաւունքներն ու պարտաւորութիւնները կը սահմանուին Լիբանանի Հանրապետութեան աշխատանքի օրէնքներով:*

ԳԼՈՒԽ Զ.- ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ա.- Կրթական Քննիչ

Յօդ.49.- *Ուսումնական Խորհուրդը կ'ունենայ իր կրթական քննիչը:*

Յօդ.50.- *Կրթական քննիչը պաշտօնի կը կոչուի Ուսումնական Խորհուրդին կողմէ, Քաղաքական Ժողովին հաւանութեամբ:*

Յօդ.51.- *Իբրեւ կրթական քննիչ՝ կ'ընտրուի ուսումնական ասպարէզի մէջ փորձառութեան տէր անձ մը, որ պարտի ունենալ հայագիտական պատրաստութիւն մը եւ ըլլայ քաջածանօթ արաբերէնի եւ օտար լեզուի մը:*

Յօդ.52.- *Կրթական քննիչի պարտաւորութիւններն են. -*

ա.- *Հետապնդել եւ գործադրել Ուսումնական Խորհուրդի կրթական ծրագիրն ու աշխատանքային երկամեայ ուղեգիծը՝ Ազգ. վարժարաններէն ներս:*

բ.- *Տնօրենին հետ կամ անոր գիտութեամբ, հարկ եղած պարագային, այցելել դասարանները՝ գնահատելու հմասար դասաւանդման եղանակները:*

գ.- Հերթական կանոնաւորութեամբ գրաւոր կամ բանաւոր տեղեկութիւն տալ Ուսումնական Խորհուրդին եւ ի պահանջեալ հարկին նաեւ ներկայ ըլլալ անոր նիստերուն՝ վերջինի հրաւերով:

դ.- Ուսումնական Խորհուրդին ուշադրութեան յանձնել դպրոցներու ուսումնական-մանկավարժական դժուարութիւնները եւ առաջարկել լուծումներ՝ անոնց հարթումին համար (դասագիրք, մեթոտաբանութիւն, եւ այլն):

ե.- Հետամուտ ըլլալ տեղական թէ միջազգային ուսումնական նորութիւններուն եւ ըստ յարմարութեան զանոնք պատշաճեցնել մեր իրականութեան:

զ.- Մասնակցիլ դպրոցական համագումարներու կամ հանդիպումներու:

է.- Հետամուտ ըլլալ պետական օրէնքներու փոփոխութեանց, յատկապէս կարդալով պետական պաշտօնաթերթը (الجريدة الرسمية):

Յօդ.53.- Կրթական քննիչին կողքին կամ անոր բացակայութեան պարագային, Ուսումնական Խոր-հուրդի որոշումով կրնան պաշտօնի կոչուիլ մասնակի քննիչներ, իւրաքանչիւրը՝ իր մասնագիտութեան մարզին մէջ:

Յօդ.54.- Մասնակի քննիչները իրենց աշխատանքը կը ներդաշնակեն կրթական քննիչին հետ, բայց համարատու կը մնան Ուսումնական Խորհուրդին: Անոնք պարտին ըլլալ համալսարանաւարտ եւ ունենան որոշ փորձառութիւն՝ ուսումնական այն մարզերուն մէջ, որոնց համար կոչուած են պաշտօնի:

Յօդ.55.- Կրթական քննիչները համարատու են Ուսումնական Խորհուրդին եւ Առաջնորդին: Անոնք պարտին տեղեակ պահել Ուսումնական Խորհուրդը իրենց աշխատանքներէն, իսկ դիւանապետը՝ իրենց տեղափոխութեան մասին:

բ.- Ուսումնական Խորհուրդի գործավար

Յօդ.56.- Ուսումնական Խորհուրդը կ'ունենայ իր գործավարը, որ առնուազն պէտք է ունենայ հայկական երկրորդական վարժարանի վկայական եւ ուսումնական որոշ փորձառութիւն եւ քաջածանօթ ըլլայ արաբերէն լեզուի:

Յօդ.57.- *Գործավարը պաշտօնի կը կոչուի Ուսումնական Խորհուրդի կողմէ, Քաղաքական Ժողովի հաւանութեամբ:*

Յօդ.58.- *Գործավարին պարտականութիւններն են. -*

ա.- *Հետապնդել Ուսումնական Խորհուրդի որոշումներուն գործադրութիւնը:*

բ.- *Մասնակցիլ Ուսումնական Խորհուրդի նիստերուն եւ պահել ատենագրութիւնները, պատրաստել նամակներն ու շրջաբերականները:*

գ.- *Ուսումնական Խորհուրդին զեկուցել Ազգային վարժարաններու դիմագրաւած հարցերը:*

դ.- *Վարել Ուսումնական գրասենեակի ընթացիկ բոլոր աշխատանքները:*

ե.- *Կազմակերպել Ուսումնական Խորհուրդի ծրագրած տարեվերջի քննութիւնները:*

զ.- *Կազմակերպել Ուսումնական Խորհուրդի ձեռնարկները:*

է.- *Մնայուն կապ հաստատել պետական կրթական համացանցին հետ:*

ը.- *Մնայուն կապ հաստատել ուսուցչաց սենտիքայի հետ:*

զ.- *Պետական Գործերու Վարիչ*

Յօդ.59.- *Ազգային Առաջնորդարանէն ներս կը գործէ պետական գրասենեակներու պատասխանատու պաշտօնեայ մը (կամ պաշտօնեաներ), որ կը նշանակուի Քաղաքական Ժողովին կողմէ:*

Յօդ.60.- *Անոր (կամ անոնց) պարտաւորութիւններուն մէջ կ'ընկնայ կապ պահել կրթական եւ էլեւմտական նախարարութեանց հետ, զբաղիլ ընկերային ապահովութեան, ուսուցչաց հատուցումի սնտուկով, շահատուրքերով եւ այլ պետական գործերով, որոնք կը վերաբերին թէ՛ Առաջնորդարանի պաշտօնէութեան եւ թէ՛ ի մասնաւորի ուսուցչական պաշտօնէութեան: Այս*

վերջին պարագային, ան կը գործէ Ուսումնական Խորհուրդի ցուցմունքներով եւ համարատու է անոր:

Յօդ.61.- *Ուսումնական Խորհուրդը կրնայ նաեւ իրմէ Քկամ անոնցմէ՝ պահանջել հաշուական քննութիւն եւ այլ աշխատանքներ, որոնք կը վերաբերին իր մարզին: Ան համարատու է Առաջնորդ Հօր, Ուսումնական Խորհուրդին եւ դիւանապետին:*

Յօդ.62.- *Իր աշխատանքի կանոնաւորութեան վրայ կը հսկէ դիւանապետը:*

Յօդ.63.- *Ան պէտք է տիրապետէ արաբերէնի, ունենայ համալսարանական կազմաւորում կամ երկրորդական ուսում եւ ծանօթ ըլլայ պետական գրասենեակներու գործունէութեանց:*

Յօդ.64.- *Պետական գործունէութեանց պատասխանատուին (կամ պատասխանատուներուն) պարտականութիւններն են.-*

ա.- *Իւրաքանչիւր դպրոցական տարեշրջանի սկիզբը ապահովել աշակերտական եւ ուսուցչական կազմերու վերաբերեալ ցանկերը եւ հարցարանները:*

բ.- *Վաւերացնել աշակերտական եւ ուսուցչական տոմարները՝ կրթական նախարարութենէն:*

գ.- *Ստուգել եւ կրթական նախարարութեան անձնական վարժարաններու բաժանմունքին յանձնել ձրիավարժ դպրոցներու ուսուցչական եւ աշակերտական անուանացանկերը:*

դ.- *Ստուգել եւ կրթական նախարարութեան պատկան բաժանմունքներուն յանձնել ձրիավարժ եւ ոչ ձրիավարժ դպրոցներու ուսուցչական եւ աշակերտական անուանացանկերը:*

ե.- *Վաւերացնել նորեկ աշակերտներու հաստատագիրերը եւ թիւերը փոխանցել:*

- գ.- *Արձանագրել նորեկ ուսուցիչները հասնուցման եւ ընկերային ապահովութեան գրասենեակին մօտ:*
- է.- *Պատրաստել եւ հետապնդել հրաժարեալ ուսուցիչներու հասնուցման դիմումնագիրը:*
- ը.- *Պատրաստել եւ ներկայացնել ուսուցչաց հասնուցման սնտուկի հաշիւները:*
- թ.- *Պատրաստել ուսուցչաց շահատուրքի հաշիւները եւ ներկայացնել, ապա՝ ապահովել անդորրագիրները:*
- ժ.- *Պատրաստել եւ յանձնել ընկերային ապահովութեան սնտուկին հաշիւները, ստանձնել անդորրագիրները, ապահովել նորեկ ուսուցիչներու եւ կատարել հիւանդանոցային մուտքի գործողութիւնները, եւայլն:*
- ժա.- *Պատրաստել եւ հսկել ուսուցչաց յաւելումներու տախտակներուն վրայ, եւ արդիւնքը փոխանցել Ուսումնական Խորհուրդին:*
- ժբ.- *Հետապնդել ընտրութիւնը ծնողական խորհուրդներուն:*
- ժգ.- *Պատրաստել եւ կրթական նախարարութեան յանձնել նախահաշիւ պիւտճէները:*
- ժդ.- *Պետութեան յանձնել պրէզօվէի եւ պաքալորիայի կարգերու աշակերտութեան դիմումնագիրները, ապահովել անոնց թիւերը, նիշերը եւ վկայականները: Իրականացնել երկրորդ շրջանի արձանագրութիւնը (ձախողներու պարագային):*
- ժե.- *Դասաւորել հարցերը քննիչներու այցելութեան ընթացքին:*
- ժզ.- *Հետապնդել եւ ամբողջացնել տնօրէնի նշանակման գործողութիւնները:*
- ժէ.- *Կատարել հետապնդումը դպրոցի արտօնագիրի վերաբերեալ դիմումին:*
- ժը.- *Ապահովել պետական նպաստներու գանձումը:*

ԺԹ.- *Ապահովել պետական ուսուցիչները:*

Ի.- *Պատրաստել, ըստ կարիքի, պետական յաւելումներու հաշիւները եւ ամսաթոշակի յաւելումի տախտակները:*

Յօդ.65.- *Գործավարը, կրթական քննիչը, մասնակի քննիչները եւ պետական գործերու գրասենեակի պաշտօնեաները իրենց պաշտօնը կը վարեն ըստ Առաջնորդարանի հետ կնքուած համաձայնութեան: Իրենց թոշակները եւ այլ հատուցումները Ուսումնական Խորհուրդի կողմէ կ'առաջարկուի Տնտեսական Խորհուրդին եւ կը վաւերացուի Քաղաքական Ժողովին կողմէ՝ առ ի գործադրութիւն:*